49. ԿՆԿԱ ԼԱՎՈՒԹԵՆԸ ԷՐԿՆԵՆ Է

Վախտով կ'էղնի մեկ թագավոր։

Թագավոր ուր լալի հետ գուքա ճամփա։ Իրեն ռաստ գուքա մեկ ռանչպար, ձեռք էրեսին գնե կը, խաղ կանչելով կ'անցնի։

Թագավորը զարմանա կը, կըսե կը. «Էս ի՞նչ մարթ է, օր իմ կշտես խաղ ասելով կանցնի կը»։

Հ'իրիկունը գուքա էդոր միսաֆիր կ'էղնի կը։

Խաղ կանչողի կնիկ էդոր շատ իքրամ կէնե կը։ Գելնի էդոր անուն մեմ էլ գրե կը, գելնի կէրթա իրեն տեղը։

Թագավորը գիր կը ղրկե ռանչպարին, թե՝ թող գա իմ քովս։

Օր ռանչպար գուքա, թագավոր իրեն կըսե կը.— Իմ իրեք կնիկ քեզի, քու մեկ կնիկդ ընձի պիտի տաս։

Էն էլ կըսե կը.— Դու մեկ թագավորըմ ես, օր ամր կէնես՝ ես էլ կուտամ։

Թագավոր բռնե կը իրեք կնիկ թասլիմ կ'էնե ռանչպարին։

Ռանչպար իրեք կնիկ տանի կը շրի քանար։

Մեկին հարցնե կը.— Դու ի՞նչ սուչ ունիս օր թագավոր տվեց քեզ ինձ։

Ըսեց.— Հարքաշ գուքար թագավորեն բողոք կուտար, ես մեկն էրկուս կէնեի թագավորին կըսեի կը։

Ռանչպար տարավ էնոր ցըքեց շրի օրթալըխ՝ խեղդավ։

Էկավ էստեղ, մեկելին հարցուց.— Քու սո՞ւչդ ինչ է։

Ըսավ.— Իմ սուչս էն է, օր ես տները շատ ժուռ գուքալի, տուն չէի մնար։

Տարավ ցըքեց շրի օրթալըխ, էն էլ խեղդավ։

Էկավ մեկալին, հարցուց.— Քո՞ւ սուչդ ինչ է։

Ըսավ.— Ես հալխի հետ գելնեի գ'ըյնեի կը, իմ սուչս էն էր։

Էնոր չի ցըքեր ջուրը։ Բերե կը ուրին։ Կրթե, կը սորվեցնե, շա՛տ լավ կէղնի կը, մեկելից լավ։

Թագավոր գուքա Համբա։ Իրեն ռաստ գուքա կը էս ռանչպար, ձեռք էրեսին դնե կը, խաղ կանչելով կանցնի։

Թագավոր գուքա նորից միսաֆիր կ'էղնի։ Գուքա ղոնախը տեսնի կը, օր իրեն ղոնախեն լավ էր։ Ռանչպարի կնիկ առաջինի պես թագավորին պատիվ կէնե, կաշե կը էլի ավալվա պատիվն է։

Ռանչպարին հարցու կը թե.— Էս դու մե ռանչպարըմ էղնիս, է՞սման քու օղլուշաղրդ լավ կ'էղնի։

Էնե կըսե.— Ընձնեց է օր օղլուշաղրս էմալ լավ կէղնի կը։